№ 202 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26 1900 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26 № 202

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պանդուխտները ունեն պարտաւորութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաչարժից վնասվածների օգտին. Նամակ Կաղզուանից. Նամակ Նոր-Նախիջեւանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Հայկական տպագրութիւն.

ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ ՈՒՆԵՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գաւառներից ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ պանդուխտների թիւը օրէցօր աւելանում է: Այն գիւղերը, որոնք մինչև այժմ կառավարվում էին իրանց արդիւնաբերութեամբ, այժմ այլ ևս անկարող են ապահովել իրանց աղգաբնակութեան կարիքները և ստիպված են իրանց զաւակներին ուղարկել զանազան տեղեր աշխատանք որոնելու:

Անշուշտ պանդխտութեան դէմ կարելի է մասամբ կռուել բարւոքելով տեղական գիւղատնտեսութիւնը և արդիւնաբերելով նոյն հողից աւելի մթերքներ, քան առաջ: Բայց այդ բարւոքումը պահանջում է ժամանակ, պահանջում է պատրաստութիւն, իսկ մինչ այն՝ կարիքը ուղարկում է գիւղի երիտասարդներին դէպի քաղաքները: Միւս կողմից իրաւ է և այն, որ սակաւահող տեղերում նոյն իսկ գիւղատնտեսութեան բարւոքումը չէ կարող ապահովել բոլոր գիւղական կարիքները. այդ պատճառով գիւղի ազատ ձեռքերը պէտք է գործ որոնեն քաղաքներում, գործարաններում և զանազան արհեստանոցներում: Այդպիսով՝ մեր գիւղական ժողովրդի մի որոշ մասը, կարճ թէ երկար ժամանակով, ստիպված է իր ապրուստը հայթայթել իբրև բանուոր, իբրև պանդուխտ:

Գիւղական կեանքի մէջ պանդուխտի գոյութիւնը առաջ է բերել մի շարք նոր երևոյթներ, որոնք արժանի են ուսումնասիրութեան: Շատ գիւղական տներ սպասում են իրանց պանդուխտների վաստակներին, որ կարողանան լրացնել տան մէջ պակաս մնացած մթերքները և վճարել իրանց տուրքերը: Գիւղական կանայք սպասում են իրանց ամուսիններին և զաւակները՝ իրանց հայրերի վերադարձին: Քայքայված տնտեսութիւնը սպասում է իր մշակներին, որպէս զի նա նորոգվի և վերակազմվի:

Երբ պանդուխտները ժամանակին փող են ուղարկում իրանց գիւղերը, երբ նրանք յաճախ այցելում են իրանց ծննդավայրը և տեսակցում իրանց կանանց և զաւակների հետ, երբ նիւթապէս ուժեղացած պանդուխտը գալիս է վերակենդանացնելու իր տնտեսութիւնը և նորից վառելու իր օջախը, ի հարկէ, ամեն բան կարգին է գընում և գիւղը իսկապէս օգտվում է պանդխտութիւնից: Բայց իրականութիւնը յաճախ բոլորովին ուրիշ պատկեր է ներկայացնում: Պանդուխտը թոյլ է տալիս իրան անհոգ և անտարբեր վերաբերմունք, ինքը չէ վերադառնում գիւղ և փող չէ ուղարկում տանեցիներին: Գիւղական ընտանիքները ամիսներով ու տարիներով սպասում են իրանց պանդուխտներին, շատ անգամ չը ստանալով մի համառօտ լուր նրանց մասին:

Եթէ գիւղը ստիպված է հաշտվել պանդխտութեան հետ, նա յամենայն դէպս անկարող է հաշտվել այն զանցառութիւնների և չարագործութիւնների հետ, որ թոյլ են տալիս իրանց գիւղական պանդուխտները, մոռանալով իրանց տուն ու տեղը և իրանց պարտաւորութիւնները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Ռուսաց լրագիրների մէջ դարձեալ սկսվեց բանակոիւ «կենտրօնի» եւ «ծայրերի» մասին: Նոր խօսք չէ դա եւ, եթէ մեր ընթերցողները յիշում են, դրա էութիւնը այս է. մի քանի «թունդ հայրենասէրներ», որոնց պարագլուխն է, ի հարկէ, Սուվօրին, տարիներից ի վեր կանչում են, թէ Ռուսաստանի ծայրերը բարգաւաճում են, իսկ կենտրօնը աղքատանում է, ուժասպառ դառնում. պատճառն այն է, որ կենտրօնը շատ հարկ է տալիս, բայց քիչ բարիքներ է ստանում (կրթութեան, ճանապարհների հաղորդակցութեան եւ այլ կուլտուրական յարմարութիւնների կողմից), մինչդեռ պետութեան ծայրերը, որոնք միայն դէֆիցիտ են պատճառում պետական գանձարանին, առաջ են գնում, որովհետեւ այդ տեղերի վրա աւելի շատ ուշադրութիւն է դարձնվում, քան կենտրօնի վրա: Սուվօրինի օրգանը նորերս նոյն իսկ այն տեղին հասաւ, որ առաջարկում էր պետութեան ծայրերի աղգաբնակութեան վրա առանձին հարկ դնել, ուրիշ խօսքով—բաժանել պետութիւն կազմող աղգաբնակութիւնը ռուսների եւ ոչ-ռուսների: Այդ «հայրենասիրական» ոգեւորութեան պատասխանեց «Сѣвер. Курьеръ» լրագիրը, պաշտպանելով այն արդար սկզբունքը, թէ պետութիւնը մի ամբողջութիւն է կազմում, որի մէջ մտնում են զանազան աղգեր եւ լեզուներ, եւ այդ ամբողջութիւնը չէ կարելի պառակտել, ծագնելով աղգայնական խորութիւններ: Եւ իրաւ, կարելի է միթէ այնքան վարակվել նեղ չօվինիզմով, որ պահանջել պետութեան մի մասի համար լաւ կեցութիւն, իսկ միւս մասերի համար—զրկանք եւ պակասութիւն: Ի՞նչ է նշանակում կենտրօն եւ ի՞նչ են նշանակում ծայրեր: Դրանք աշխարհագրական գիրքեր են, մինչդեռ պետական տեսակէտից թէ կենտրօնը եւ թէ ծայրը մասեր են, որոնք մի եւ նոյն գիրքն են գրաւում, մի եւ նոյն պարտաւորութիւններն ու իրաւունքները պիտի ունենան: «Россія» լրագիրը այս առիթով ասում է.

> Կենտրօնի պաշտպանները վերցնում են 3—6 նահանգներ Մոսկվայի շուրջը եւ ասում են, թէ դա է ռուսաց պետութեան պատմական կենտրօնը եւ հէնց այդ կենտրօնին պէտք է շնորհել ամեն տեսակ բարիքներ, որպէս զի նա ամրանայ եւ ծայրերի վերաբերմամբ ցոյց տայ միախմբելու ձգողական ոյժ: Այսպիսի քաղաքականութեան քարոզը կարող էր միտք ունենալ Իվան Գրոզնիի ժամանակի Ռուսաստանում: Իսկ այժմ Խարկովի եւ Տօմսկի նահանգները կարող են հարցնել, թէ քանի՞ տարի պէտք է մնալ ռուսաց պետական եւ քաղաքացիական կարգերի տակ, որպէս զի իրանք էլ մտնեն այն կենտրօնական եւ բուն ռուս նահանգների թւի մէջ, որոնց համար լրագիրները ամեն տեսակ բարիքներ եւ շնորհներ են պահանջում: Եկատերինօսլավի եւ Տաւրիայի նահանգների բնակիչները կասեն, թէ իրանք բոլորովին մեղաւոր չեն, որ իրանց նախնիքները պետական շահերի համար այդքան հեռու են գնացել Մոսկվայից:

Եթէ այդ տեսակ հարց ու փորձ սկսվէր, այն ժամանակ Ռուսաստանի բոլոր նահանգները կասէին, որ իրանք մեղաւոր չեն, որ աշխարհագրական այս կամ այն դիրքն են բռնում պետութեան մէջ. նրանք կասէին, որ իրանցից մէկը կարող է աջ կողմում լինել, միւսը ձախ կողմում, մի երրորդը ծայր համարվել, չորրորդը՝ սահմանագլուխ եւ այլն, բայց ամենքը մի ընտանիքի անդամներ են, մի ամբողջութեան մասնիկներ են, հետեւաբար խորութիւնների առարկայ չը պիտի դառնան, այլ պիտի զարգանան եւ առաջ գնան հաւասարապէս, որպէս զի ամբողջութիւնը զարգացած եւ առաջադէմ լինի: Ճիշդ է, խորութիւնների մասին մենք վերեւում *) ասացինք, որ Յունանեանը Կղեմէս Գալանոսի սիրելի աշակերտն էր եւ Լվովի պապական դպրոցի փառքն ու պարծանքը: Լինելով մի վերին աստիճանի ֆանատիկոս նորադարձ, նա արժանացաւ մեծ ուշադրութեան, ուղարկվեց Հռոմ, ուր աշակերտեց Պրօպագանդայի դպրոցում: Նախկին ողորմելի հայ տիրացուն այնքան ճարպիկ եւ եռանդոտ էր, որ պատրաստվում էր Նիկոլի յաջորդը լինել: Բայց որովհետեւ Նիկոլը շուտ չէր մեռնում, թէեւ ծեր էր, ուստի Յունանեան, ժամանակը զուր սպասողութեան մէջ անց չըկացնելու համար, գնաց Հայաստան՝ հերետիկոսներին խնդքի բերելու համար: Ամենից շատ նա աշխատում էր իր հայրենի Եւդոկիա (Թոխաթ) քաղաքում: Այն փաստը, որ նորադարձ հայը անհամեմատ շատ ֆանատիկոս եւ կատաղի էր քան բուն կաթոլիկը, մի նոր հաստատութիւն դտաւ այս մարդու անձի մէջ *): Ժողովրդի մէջ անբաւականութիւններ ծագեցին եւ Յունանեանը արգելվեց Էջմիածնում: Այս ժամանակ էր (1682), որ Խաչատուր Կարնեցին հանդիպեց նրան եւ համաձայնվեց գնալ նրա հետ Հռոմ, ուր մտաւ Պրօպագանդայի դպրոցը եւ դարձաւ կաթոլիկ քահանայ:

Գործունէութեան ասպարէզ նա ընտրեց Կ. Պոլիսը: Այդտեղ թէ քարոզում էր եւ թէ գրում ու հռչակվեց իբրև գիտնական մարդ: Բացի Քերականութիւնից, որ տպվեց Լիվորնօի տպարանում, նրա գրչի տակից դուրս եկան կրօնական բովանդակութեամբ հատորներ («Աստուածաբանութիւն ընդարձակ», «Բովանդակութիւն Աստուածաբանութեան», «Բարոյական Աստուածաբանութիւն», «Մեկնութիւն երգոց երգոյն», «Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն»): Կարնեցի Խաչատուրը ջուղայեցի Յովհաննէս Մրքուզի նման մի «տիեզերալոյս» կը լինէր, եթէ միմիայն այսպիսի

*) Ահա մի նմուշ այդ լեզուից. «Այսինքն, երանի այնպէս մարդոյն, որ անօրէն և թերահաւատ մարդկանց ականջ չի դներ. և նոցա խրատովն և խորհրդովն չի շրջիր. և մեղաւոր մարդկանց չար գործոցն հետեւելով նոցա ճանապարհն չի գնար և վատաբերան և չարալեզու մարդկանց նման չի նստեր այլոց չար խրատ տար, և յԱստուծոյ ճանապարհէն հեռացներ զիւրեանք»:

*) «Սիոնիք», եր. 335.

ցում երկու հազար պատարագ մատուցանել տան իր հոգու փրկութեան համար *):

Ցիշատակենք այստեղ Բօրտօլիի տպարանում հետեւեալ տարին տպված «Տօմար» անունով գիրքը, որ մի արտատպութիւն է Ոսկանի՝ նոյն անունը կրող հրատարակութիւնից, եւ մենք վերջացրած կը լինենք XVII դարի ընթացքում Վենետիկի մէջ եղած հրատարակութիւնների ցուցակը:

Վենետիկից դուրս, բացի Պրօպագանդայի տպարանից, XVII դարի վերջին տասնամեակներում հայերէն ապագրութիւններ տալիս են եւ իտալական երկու ուրիշ քաղաքներ—Պադուա եւ Լիվորնօ: Առաջին քաղաքում 1690-ին մի ինչ-որ «Տիմոթէոս Գառնուկ Ասորոց արքեպիսկոպոս» տպագրում է վերոյիշեալ «Դաշանց թուղթը» եւ «Հաւատով խոստովանիմ» աղօթքը: Աւելի արդիւնաւոր է ապագրութեան գործը Լիվորնօ քաղաքում, ուր 1691 թուականից սկսում է գործել մի տպարան՝ դարձեալ Էջմիածնի եւ ս. Սարգսի վանքի անունով: Որոշ տեղեկութիւններ այդ հիմնարկութեան մասին մենք չունենք, բայց թէ անունը եւ թէ տպագրական տառերի ձեւը թոյլ են տալիս ենթադրելու, որ դա Ոսկանի տպարանի մի մասն է, փոխադրված, երեւի, Մարսէլից: Յայտնին այն է, որ Լիվորնօի տպարանը գործեց տասը տարի, մինչեւ 1701 թուականը: Առաջին գիրքը, որ տպագրվեց այդտեղ, կարնեցի Խաչատուր վարդապետ Առաքելեանի «Քերականութիւնն» էր: Երկու խօսք այս հեղինակի մասին, որ իր ժամանակին գիտնական վարդապետի հռչակ էր վայելում եւ թողել է շատ գրուածքներ:

Նա ծնվել է 1666-ին: Ուսում ստանալու համար նա գնաց Էջմիածին, բայց այդտեղ նրան որսաց Վարդան Յունանեան անունով հայ կաթոլիկ վարդապետը: Սա այն Յունանեանն է, որ մի հայ եպիսկոպոսի սպասաւոր էր, նրա հետ գնաց Լեհաստան, բայց այդտեղ թողեց իր եպիսկոպոսին եւ մտաւ կաթոլիկ վարդապետների մօտ: Մենք վերեւում *) ասացինք, որ Յունանեանը Կղեմէս Գալանոսի սիրելի աշակերտն էր եւ Լվովի պապական դպրոցի փառքն ու պարծանքը: Լինելով մի վերին աստիճանի ֆանատիկոս նորադարձ, նա արժանացաւ մեծ ուշադրութեան, ուղարկվեց Հռոմ, ուր աշակերտեց Պրօպագանդայի դպրոցում: Նախկին ողորմելի հայ տիրացուն այնքան ճարպիկ եւ եռանդոտ էր, որ պատրաստվում էր Նիկոլի յաջորդը լինել: Բայց որովհետեւ Նիկոլը շուտ չէր մեռնում, թէեւ ծեր էր, ուստի Յունանեան, ժամանակը զուր սպասողութեան մէջ անց չըկացնելու համար, գնաց Հայաստան՝ հերետիկոսներին խնդքի բերելու համար: Ամենից շատ նա աշխատում էր իր հայրենի Եւդոկիա (Թոխաթ) քաղաքում: Այն փաստը, որ նորադարձ հայը անհամեմատ շատ ֆանատիկոս եւ կատաղի էր քան բուն կաթոլիկը, մի նոր հաստատութիւն դտաւ այս մարդու անձի մէջ *): Ժողովրդի մէջ անբաւականութիւններ ծագեցին եւ Յունանեանը արգելվեց Էջմիածնում: Այս ժամանակ էր (1682), որ Խաչատուր Կարնեցին հանդիպեց նրան եւ համաձայնվեց գնալ նրա հետ Հռոմ, ուր մտաւ Պրօպագանդայի դպրոցը եւ դարձաւ կաթոլիկ քահանայ:

Գործունէութեան ասպարէզ նա ընտրեց Կ. Պոլիսը: Այդտեղ թէ քարոզում էր եւ թէ գրում ու հռչակվեց իբրև գիտնական մարդ: Բացի Քերականութիւնից, որ տպվեց Լիվորնօի տպարանում, նրա գրչի տակից դուրս եկան կրօնական բովանդակութեամբ հատորներ («Աստուածաբանութիւն ընդարձակ», «Բովանդակութիւն Աստուածաբանութեան», «Բարոյական Աստուածաբանութիւն», «Մեկնութիւն երգոց երգոյն», «Ներածումն առ քրիստոնէական կատարելութիւն»): Կարնեցի Խաչատուրը ջուղայեցի Յովհաննէս Մրքուզի նման մի «տիեզերալոյս» կը լինէր, եթէ միմիայն այսպիսի

*) Գ. VI.

*) Նիկոլի մահից յետոյ բաղմելով Լեհաստանի արքեպիսկոպոսական աթոռի վրա, Յունանեան վերջնականապէս կտրեց լեհահայերի կապը Էջմիածնի հետ, մի բան, որ նոյն իսկ Նիկոլը չէր արել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսպէս ահա, XVII դարի վերջերում աշխարհաբար լեզուն մի աշխարհական մարդու միջոցով դարձեալ փորձում է մտնել գրականութեան մէջ: Բայց նրա անհրաժեշտութիւնը, նրա գոյութեան իրաւունքը չեն ճանաչում գրականութեան տէր հոգեւորականները. նրան միայն թարգմանի, բացատրողի դեր է յատկացվում, նա հայերէն լեզու չէ համարվում: Հոլակի գրչի տակից դուրս եկած խոստովանութիւնները շատ լաւ ապացոյցներ են, որ հայը չունէր գրականութիւն ամբողջ աղգի համար, ժողովրդական, ամենքի սեփականութիւնը դառնալու յարմարութիւններն ունեցող մի գրականութիւն: Բայց գոհ լինենք, որ գտնվեց գոնէ մի մարդ, մի Խօջա-Նահապետ, որ աշխարհաբար տպագրած գիրքը իրողութիւն դարձնելու համար մի ամբողջ տպարան հիմնեց, ծախսեր արաւ ազնիւ թուղթ գնելու, պատկերներ փորագրելու համար, թէեւ այդ միջոցին նրա գործերը, առեւտրի ընդհանուր նուազման պատճառով, լաւ չէին: Եւ պէտք է ասել, որ աշխարհաբար առաջին տպագրութեան մեկենասը ոչինչ չէ խնայել՝ այդ գործի վայելչութեան եւ գեղեցկութեան համար: «Պարզաբանութիւնը» մի ստուար հատոր է (840 մեծադիր երես), պատկերազարդ, բաւական մաքուր տպագրված խոշոր տառերով, ընտիր թղթի վրա: Գրքի սկզբում դրված է Գիւլնազարեանի պատկերը, որ հասկացողութիւն է տալիս, թէ ինչ տարազով էին հագնվում հայ վաճառականները:

Դիմելով գրքի լեզուին, որ Գիւլնազարեանի ջանքերով եւ այնքան վերապահումներով մըտցրած է այդ տպագրութեան մէջ, մենք պիտի ասենք, թէ դա աշխարհաբար է կոչվում այն պատճառով, որ զուտ գրաբար չէ. աւելի ճիշդ կը լինէր նրան անուանել գրաբարախառն աշխարհաբար, բայց չէ կարելի չը համարել նրան մի նշանաւոր քայլ՝ գիրքը ժողովրդին մօտեցնելու եւ ժողովրդի գործածական լեզուի ձեւերը գրական դարձնելու գործի մէջ *): Գրքի երեսները բաժանված են երկու սիւնեակների. աջ սիւնակում գրված է Սաղմոսի բնագիրը, իսկ ձախում—բացատրութիւնը: Ստուար հատորի տպագրութիւնը հեշտութեամբ չը վերջացաւ. Գիւլնազարեանն ասում է, որ մի քանի անգամ հարկադրված էր կիսակատար թողնել գործը, արձակել աշխատաւորներին եւ ապա նորից սկսել:

Երեւի հէնց այդ նեղութիւնների պատճառով էլ Խօջա-Նահապետը փակեց իր տպարանը: Այնուհետեւ նրա անունը մենք հանդիպում ենք մի անգամ: 1694-ին Վենետիկում սկսում է հայերէն գրքեր տպագրել Անտոն Բօրտօլի իտալացին: Այս տպարանի մասին մենք առ այժմ չենք խօսի. Բօրտօլիի մեծ գործունէութիւնը եւ հայերին մատուցած ահագին ծառայութիւնները XVIII դարին են վերաբերում: Ասենք միայն այսքանը, որ այս տպարանից դուրս եկած առաջին հայերէն գիրքը հրատարակել է Գիւլնազարեանը՝ ջուղայեցի Անտոն անունով վաճառականի հետ: Տպագրված գիրքն է «Դաշանց թուղթ» անունով հին անվաւեր գրուածքը, որ ցոյց է տալիս, թէ միաբանութեան դաշինք է եղել կապված Հռոմի Սեղբեստրոս պապի եւ Գրիգոր Լուսաւորչի մէջ: Տպագրութիւնը լոյս տեսաւ 1695-ին. բայց այդ ժամանակ Գիւլնազարեանը կենդանի չէր. նա մեռաւ 1694-ի դեկտեմբերի 31-ին, պատուիրելով, որ իր ժառանգները կարճ միջոցներ: Դրանք աշխարհագրական գիրքեր են, մինչդեռ պետական տեսակէտից թէ կենտրօնը եւ թէ ծայրը մասեր են, որոնք մի եւ նոյն գիրքն են գրաւում, մի եւ նոյն պարտաւորութիւններն ու իրաւունքները պիտի ունենան: «Россія» լրագիրը այս առիթով ասում է.

> Կենտրօնի պաշտպանները վերցնում են 3—6 նահանգներ Մոսկվայի շուրջը եւ ասում են, թէ դա է ռուսաց պետութեան պատմական կենտրօնը եւ հէնց այդ կենտրօնին պէտք է շնորհել ամեն տեսակ բարիքներ, որպէս զի նա ամրանայ եւ ծայրերի վերաբերմամբ ցոյց տայ միախմբելու ձգողական ոյժ: Այսպիսի քաղաքականութեան քարոզը կարող էր միտք ունենալ Իվան Գրոզնիի ժամանակի Ռուսաստանում: Իսկ այժմ Խարկովի եւ Տօմսկի նահանգները կարող են հարցնել, թէ քանի՞ տարի պէտք է մնալ ռուսաց պետական եւ քաղաքացիական կարգերի տակ, որպէս զի իրանք էլ մտնեն այն կենտրօնական եւ բուն ռուս նահանգների թւի մէջ, որոնց համար լրագիրները ամեն տեսակ բարիքներ եւ շնորհներ են պահանջում: Եկատերինօսլավի եւ Տաւրիայի նահանգների բնակիչները կասեն, թէ իրանք բոլորովին մեղաւոր չեն, որ իրանց նախնիքները պետական շահերի համար այդքան հեռու են գնացել Մոսկվայից:

Եթէ այդ տեսակ հարց ու փորձ սկսվէր, այն ժամանակ Ռուսաստանի բոլոր նահանգները կասէին, որ իրանք մեղաւոր չեն, որ աշխարհագրական այս կամ այն դիրքն են բռնում պետութեան մէջ. նրանք կասէին, որ իրանցից մէկը կարող է աջ կողմում լինել, միւսը ձախ կողմում, մի երրորդը ծայր համարվել, չորրորդը՝ սահմանագլուխ եւ այլն, բայց ամենքը մի ընտանիքի անդամներ են, մի ամբողջութեան մասնիկներ են, հետեւաբար խորութիւնների առարկայ չը պիտի դառնան, այլ պիտի զարգանան եւ առաջ գնան հաւասարապէս, որպէս զի ամբողջութիւնը զարգացած եւ առաջադէմ լինի: Ճիշդ է, խորու-

թիւններ որոնող եւ խորութիւն պահանջող հերոսները մի տեսակ արհեստ են դարձրել գոռալը, թէ իրանք են միայն հասկանում աշխարհի չարն ու բարին, բայց հօ չէ՞ կարելի ամեն մի առասպելի ականջ կախել լոկ այն պատճառով, որ այս ինչ կամ այն ինչ առասպելը նոյն իսկ համոզմունք էլ կարող է դառնալ մի քանիների համար։

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախալքալաքի գաւառի երկրաշարժից վնասվածների օգտին.

Քիշինեւից, գօկտոր Նիկոլայ Անտոնովիչից 46 ր. 37 կ., որ ստացված է պրոֆէսոր Եղիազարեանի մի դասախօսութիւնից։

Բագուից՝ Սրապիոն Մնացականեանից 7 ր., որ նուիրել են. Լ. Եղիազարեանց 5 ր., Ոմն 2 ր.։

Բալախանիից, Գ. Կոստանեանից 40 ր., որ նուիրել են «Соучастники» ընկերութեան ծառայողները եւ բանուորները. Մէլիք-Առաքելեանց ամուսիններ 5 ր., Գ. Ադամեան 5 ր., Ս. Բարսեղեան 1 ր., Ե. Սարգսեան 50 կ., Ն. Խուբլարեան 3 ր., Ն. Գասպարեան 3 ր., Ա. Մակեան 50 կ., Մ. Սարգսեան 50 կ., Մ. Սաբուսեան 1 ր., Օ. Այվազեան 50 կ., Դ. Սարգսեան 50 կ., Մ. Ղահրամանեան 1 ր. 50 կ., Մ. Սարոյեան 1 ր., Ա. Պետրոսեան 50 կ., Ա. Շախվալոդեան 15 կ., Ի. Աւագեան 15 կ., Ն. Կապլան 1 ր., Խ. Դաւթեան 50 կ., Մ. Բաղդասարեան 50 կ., Ա. Հայրապետեան 50 կ., Franz Noruillo 1 ր. Ա. Բարսեղեան 50 կ., Օ. Մարտիրոսեան 50 կ., Ն. Աբուլեան 50 կ., Յ. Հայրապետեան 1 ր., Կ. Մարտիրոսեան 50 Ա. Յովհաննէսեան 20 կ., Յ. Ծատուրեան 3 ր., Բ. Մանուչարեան 50 կ., Ն. Պապով 5 ր., Յ. Ս. Սարաջեան 1 ր.։

Երեւանից, ուսուցիչ Ա. Ատուածատրեանից 2 ր.։

Բալախանիից, «Ի. Փիթօեվ եւ ընկ.» առեւտրական տան գրասենեակից 98 բուբլի 77 կ., որ հաւաքված է. 1) Բօմանիի նաւթահանքից եւ Բալախանիի գրասենեակից 56 ր. 87 կ., XI գրուպպա 13 ր. 77 կ., 50-րդ նաւթահանք—14 ր. 50 կ., V գրուպպա 4 ր. 40 կ., ուստա-Սիմօն 3 ր. (հանված է ճանապարհածախս 77 կոպէկ)։

Շուշուց, Ներսէս Մէլիք-Փաշայեանից 25 բուբլի, որ ստացված է Միքայէլ Թամիրեանից։

Ընդամենը 219 բուբ. 14 կոպ.։

Մինչեւ այժմ ստացել ենք (տ. «Մշակ» № 115) 35,426 բուբլի 55½ կոպ.. երեք ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Ուղարկել ենք 35,000 բուբլի, 3 ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Յանձնեցինք Թիֆլիսի գլխաւոր կոմիտէին 426 բուբլի 55½ կոպ. եւ փակում ենք այս նուիրատուութիւնների հաշիւը։

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 16-ին

Կաղզուանի եկեղեցու շինութեան հարցը, ըստ երեւոյթին, դեռ շատ պիտի զբաղեցնէ տեղիս հայ հասարակութեան. նա գնալով՝ աւելի եւ աւելի սուր կերպարանք է ստանում։ Ժողովուրդը երկու կուսակցութեան է բաժանված։ Մի կողմ կանգնած են հոգեւոր դասը եւ ամբողջ հասարակութիւնը, իսկ միւս կողմը—Զաքար-աղա Զանփոլատեան եւ իր մի քանի արբանեակները։

Ինչպէս յայտնի է, երկար տարիների ձգձգումից յետոյ, այս տարի միայն, շնորհիւ Կարսի յաջորդ Եղիշէ վարդապետի անմիջական հսկողութեան եւ Զաքար-աղա Զանփոլատեանի նիւթական աջակցութեան, սկսվել էր եկեղեցու շինութիւնը, եւ յոյս կար, որ մինչեւ աշնան վերջերը եկեղեցին պատրաստ կը լինի։ Բայց, ինչպէս ասում են՝ «ամեն բանի վերջն է գովելի»։ Բարեգործութիւն ասած բանը՝ դեռ երկար տարիներ են հարկաւոր, որ մեր ժողովուրդն ըմբռնէ ինչպէս հարկն է։ Մեզանից շատերը մինչեւ անգամ ի չարն են գործ դնում այդ հասկացողութիւնը, երբ պատահում է, օրինակ, որ մէկն իր հաշուով դիցուք հասարակական որ եւ է բարենպատակ հիմնարկութիւն է կառուցանում։ Թւում է այդպիսիներին, որ բարեգործութիւն յանձն առնելը իրաւունք է տալիս նրանց ամեն տեսակ աններելի միջոցներ գործ դնելու, եւ նայելու այդ հիմնարկութեան վրա՝ որպէս իրանց տան շինութեան վրա։ Ճիշդ այդ տեսակ բարեգործների թիւն է պատկանում եւ մեր Զաքար-աղա Զանփոլատեան, որը յանձն էր առել Կաղզուանի եկեղեցու շինութեան գործը։ Շատ բան ներելի եւ հնարաւոր է դարձնում փողը, այդ մենք խոստովանում ենք. բայց խաղալ մի ժողովրդի կրօնական եւ բարոյական հասկացողութիւնների հետ, ստորացնել, վիրաւորել նրա զգացմունքները—այդ արդէն չափից դուրս է եւ աններելի։ Օրինակ, Զաքար-աղան ստանձնել է շինել Կաղզուանի հայոց եկեղեցին եւ անձամբ հրամայում է եկեղեցու շինութեան վրա։ Ահա թէ ինչեր է թոյլ տալիս իրան այդ պարոնը։ Բաւական է մի փոքրիկ նկատողութիւն այս կամ այն մշակի կամ արհեստաւորի կողմից, էլ հոգու կտորներ, էլ մեռելների ոսկորներ երկինք են հանվում. աջ ու ձախ հայհոյանքների հեղեղ է, որ թափվում է խեղճերի գլխին։ Այդ դեռ բաւական չէ. նա իրաւունք է հաւատում իրան պատժել եւ այն յանդուգն աշխատողին, որ հաւարձակութիւն է ստանում մի քիչ բարձր ձայնով ասել՝ «հացի փող չունեմ, աղա-ջան, մի քանի գրօշ տուր»։ Յաջորդ օրը նա ոչ միայն զրկվում է աշխատանքից՝ այլ եւ իր աշխատած օրավարձից։ Քանիներ կան այսօր, որոնք աշխատել են եկեղեցու վրա, մի չնչին նկատողութեան համար պատժվել՝ դուրս են արվել, եւ այսօր հաւարձակութիւն չեն ստանում իրանց աշխատանքը խնդրել։

Հոգի հայհոյել, աշխատողի օրավարձը կըտրել, թքել ժողովրդի կարծիքի եւ վճռի վրա եւ ամեն ժամանակ ու ամեն տեղ մարդիկ վարձել, որ թմբուկներ խփեն եւ իր «բարի ու ողորմած» անունը հռչակեն, ահա այն սովորական դարձած իրողութիւնները, որոնք ամեն օր, ամեն ժամ հնչում էին յաջորդի ականջին. լսում, տեսնում եւ զգում էր եւ Կաղզուանի ժողովուրդը։ Եկեղեցին չինել՝ նշանակում է հոգի փրկել. ամեն օր հոգի հայհոյելով կարել այս կամ այն աշխատողի քրտինքի վաստակը՝ եւ բայի այդ սրբապղծութիւնից արգելել, որ ոչ ոք չը խառնվի եկեղեցու, ժողովրդի այդ նուիրական սեփականութեան, գործերի մէջ՝ ինչ կը նշանակէ։

Այս եւ սրա նման շատ պատճառներ են, որոնց հիման վրա ամբողջ ժողովուրդը մէկ եղած պահանջում է, որ յետ խլվի «բարերարից» եկեղեցու շինութեան գործը եւ եկեղեցին հասարակութեան ծախսով շինվի։ Որպէս զի ցոյց տանք ընթերցողին, թէ ինչ տեսակ բարեգործի է յանձնված եկեղեցու շինութեան գործը՝ մենք մէջ կը բերենք մի քանի իրողութիւններ, որոնք պատահել են ժողովի ժամանակ եւ ժողովից դուրս։ Կարսի յաջորդ Եղիշէ վարդապետը աշխատում է համոզել, որ հոգի հայհոյելով եկեղեցի չեն շինի, որ Աւետարանն ասում է՝ ողորմութիւն անելիս այնպէս պէտք է անել, որ աջ ձեռքով տուածը ձախ ձեռքը չիմանայ. ահա թէ ինչ է պատասխանում «բարերարը».—«Այդ ձեր գործը չէ. դուք Կարսից ինչու էք եկել. եթէ լաւ մարդ էք, գնացէք Կարս եւ վէր ընկէք»։ Իսկ երբ մէկն ասում է, որ եկեղեցին լինելով ընդհանուրի սեփականութիւն՝ ժողովրդից իւրաքանչիւր ոք որոշ իրաւունքներ ունի նրա մէջ. եւ ինչ է պատասխանում դրա դէմ մեր «բարերարը»։—«Պարոն ես ձեզ արհամարհում եմ, ես պատիւ չեմ համարում ձեզ հետ խօսելը»։ Ահա թէ մի ուրիշին ինչ է պատասխանել, երբ վերջինս յիշեցրել է խեղճ աշխատողների փողերը կտրելու մասին։ «Դուս ըստարըստի ես, դու գնա քո ձիերը լծել տալու, դու իրաւունք չունես եկեղեցու գործերին խառնվելու»։ Այս խօսքերն ուղղված են այնպիսիների դէմ, որոնք ընիկ տեղացի երիտասարդներ են եւ միշտ մի որոշ դեր են խաղացել հասարակական հարցերում։

Հարցը գնալով, ինչպէս ասացինք, սուր կերպարանք էր ստանում, եւ Եղիշէ վարդապետը ստիպված էր մի քանի ժողովներ կայացնել, որոնց արդիւնքն եղաւ այն, որ ժողովուրդը 200 ստորագրութեամբ կայացրեց վճիռ—յետ խլել եկեղեցու շինութեան գործը Զաքար-աղա Զանփոլատեանի ձեռքից եւ առաջ տանել հասարակութեան հաշուով եւ հսկողութեամբ։ Բարոյական ապտակի զօրութիւնը այժմ աւելի է գրգռել մեր պարոնին եւ նա, այդ բոլորից յետոյ, պատգամաւոր է ուղարկում Էջմիածին խնդրելու, որ եկեղեցու շինութեան իրաւունքը իրան յետ տրվի։ Բայց, ինչպէս ասում են, ուրբաթը չուտ եկաւ քան չաբաթը։ Մինչ այդ՝ երէկ, Եղիշէ վարդապետի տուած հեռագրի համաձայն, Վեհափառ Կաթողիկոսից ստացվեց պատասխան, որով եկեղեցու շինութեան գործը յանձնելով հասարակութեան՝ հրամայում է այդ բանի համար ժողովրդից նշանակել 12 հոգաբարձուներ։ Այսօր հոգաբարձուները ընտանձնեցին իրանց պաշտօնը եւ յոյս կայ, որ եկեղեցու շինութեան գործը պատեւաւոր կերպով կը տանեն մինչեւ վերջը։ Չը նայած այս բոլորին, մի քանի շրջաններ կասկածանքով են վերաբերվում Էջմիածնի կարգադրութիւններին, ուստի միտք է յղացել բազմաբովանդակ մի հեռագիր ուղարկել՝ վճիռը անխախտ պահելու համար։

Ա. Տէր-Ներսէսեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 20-ին

Նոր-Նախիջեւանի թեմական դպրոցում կայ մի ժանկավարժ՝ պ. Զաթալբաշեան, երբեմն աշակերտ նոյն այդ դպրոցի։ Պ. Զաթալբաշեան համոզված է, որ ծեծը ամենալաւ, ամենազդու ժանկավարժական միջոց է եւ հաստատ տասը տարի շարունակ ծեծում է խեղճ աշակերտներին։ Սրանից մի քանի տարի առաջ հոգաբարձական խորհուրդը ուզում էր արձակել Զաթալբաշեանին, բայց պ. տեսուչ Զարիխան ջերմ պաշտպան հանդիսացաւ, աղաչեց, համոզեց եւ հոգաբարձուները հաւատացին պ. տեսչին, թէ պ. Զաթալբաշեան արդէն ուրիշ մանկավարժական միջոց է գտել, կամ որոնում է, լաւ չեմ յիշում։ Այդ՝ Մխիթար վարդապետի օրով էր։ Երեւի «Մշակի» ընթերցողները յիշում են այն անհամ յօդուածները, որոնք տպված էին մեր դրամագլուխ։ Այս տեսակ վիճակի է ենթարկվել եւ «Եօթն իմաստասիրաց» պատմութիւնը. նա թարգմանվել է յունարէն եւ հրէական լեզուներով, վերջին լեզուից փոխադրվել է լատիներէնի եւ տարածվել է եւրոպական ազգերի մէջ, ստանալով այդտեղ զանազան խմբագրական ձեւեր։ Այդ ձեւերից մէկի թարգմանութիւնն է հայերէնը, բայց թէ երբ է կատարվել այդ թարգմանութիւնը—որոշ յայտնի չէ. գոնէ կայ մի ձեռագիր, որ գրված է 1616 թուին *)։ Բանասիրական մի ուսանելի հարց է՝ թէ արդեօք հայերը չունէին այդ վէպի թարգմանութիւնը նախ քան արեւմտեան խմբագրութեան ծանօթանալը, այսինքն մի թարգմանութիւն, որ աւելի հին լինէր, արեւելեան թարգմանութիւններից վերցրած։ Բայց թողնենք բանասիրական հարցերը, տեսնենք թէ այդ գիրքը ինչ տեղ ունի հայոց գրականութեան մէջ։

Նայելով «Եօթն իմաստասիրաց» պատմութեան իբրեւ մի գրական գործի, որ մեծ ժողովրդականութիւն է վայելել ամեն տեղ, ուր թարգմանվել է, մենք նախ եւ առաջ կանգ ենք առնում մի հանգամանքի դիմաց.—գրական արժանաւորութիւնները չեն, որ սիրել են տալիս մի գիրք ժողովրդին, այլ առհասարակ պարզ ու անպաճոյճ պատմուածքը, հետաքրքրաշարժ բովանդակութիւնը, որ համապատասխանում է ամբոխի հասկացողութիւններին։ Մեր օրից մի 20—30 տարի առաջ, երբ արդէն գոյութիւն ունէր աշխարհիկ գրականութիւն, «Եօթն իմաստասիրաց» գիրքը դեռ կարդացվում էր ամենամեծ հետաքրքրութեամբ եւ համարվում էր խելքի ու գիտութեան մի բարձր գործ։ Այդ ժողովրդականութիւնը, անկասկած, անհամեմատ մեծ ու ընդարձակ էր անցեալ դարերում, երբ գրքերը միայն աղօթքներ եւ կրօնական բացատրութիւններ էին պարունակում իրանց մէջ։ Եօթն իմաստասէրների պատմութիւնը մեզանում չորս կամ աւելի տպագրութիւն ունեցաւ, եւ սա, ի հարկէ, մի ապացոյց է, որ նա մեր հայրերի առանձին ուշադրութեան, առանձին սէրին արժանացած մի մտաւոր սնունդ էր։

Սակայն ինչ տեսակ սնունդ է դա։ Ամենաթեթեւ, ամենաներողամիտ քննադատութիւնն անգամ անկարող է հաշտվել այդ պատմուածքի չափազանց արուեստական, միամիտ ձեւի հետ։ Իսկապէս դա առակների մի ժողովածու է, առակներ, որոնց մէջ մի չինծու, խեղճ կապ հաստատելու համար յերիւրված է Փոնցիանոսի, նրա կնոջ ու որդու պատմութիւնը։

Դէպքը պատահում է, որպէս թէ, Հռոմում։ Փոնցիանոս կայսրի կինը Դիոկղետիանոս անունով մի որդի է ծնում ու մեռնում. կայսրը որդուն յանձնում է եօթն իմաստասէրներին կրթելու համար, իսկ ինքը ամուսնանում է երկրորդ անգամ։ Երկրորդ ամուսինը, իբրեւ խորթ մայր, ուզում է ոչնչացնել Դիոկղետիանոսին եւ ստիպում է իր ամուսնուն բերել տալ նրան եօթն իմաստասէրների մօտից։ Այդ իմաստասէրները աստղագէտներ են. Դիոկղետիանոսն էլ ուսումնասիրել է այդ արհեստը եւ նայելով աստղին, հասկանում է, որ ինքը, մեծ վտանգից ազատվելու համար, պիտի եօթն օր անխօս մնայ։ Տանը խորթ մայրը առանձնանում է նրա հետ եւ առաջարկում է նրան իր մարմինը. Դիոկղետիանոսը մերժում է եւ մի եւ նոյն ժամանակ թագուհուն շրջապատող աղջիկներից մէկի մէջ ճանաչում է ծպտեալ սիրականին, որ ապրում էր իր մօր հետ։ Այդ մայրը հասկացնում է իր ամուսնուն, թէ որդին կամենում էր իրան բռնաբարել. կայսրը հրամայում է սպանել որդուն։ Եւ սկսվում է մի մրցութիւն թագուհու ու եօթն իմաստասէրների մէջ։ Թագուհին առակով համոզում է Փոնցիանոսին սպանել տալ որդուն, իսկ եօթն իմաստասէրները հերթով մի մի առակ են ասում եւ ազատում իրանց աշակերտին։ Եօթն օր տեւում է այդ մրցութիւնը. կայսրը կամ իր կնոջն է լսում կամ իմաստասէրներին. եօթն օրից յետոյ խօսում է Դիոկղետիանոսը, մի մեծ առակ է պատմում եւ խայտառակում է խորթ մօրը, մերկացնել տալով նրա ծպտեալ սիրականին։

Թէեւ այսքան խեղճ ու աղքատիկ գրական գործ է «Եօթն իմաստասիրաց» պատմութիւնը, թէեւ նրա մէջ շատ ու շատ բան առասպելական է, անբնական, հիմված հին մարդու անտիպասպաշտութիւնների եւ մանաւանդ դիւրահաւատութեան վրա, բայց չէ կարելի ընդունել նրան իբրեւ մի գրական երեւոյթ մեր մէջ, որ ոչինչ ուշադրութեան արժանի չը լիներ։ Դա առաջին աշխարհական վէպն է—այսքանն էլ բաւական է, որ մենք կանգ առնենք նրա առաջ։

Մեզանում, գրականութեան սկսված օրից, տիրապետեց խիստ կրօնական ուղղութիւն։ Մենք ունեցանք շատ գրողներ, բայց դրանց մէջ չը գտնվեց մէկը, որ տար մի պատմուածք, մի վէպ աշխարհիկ կեանքից։ Եւ սա մեր, հայկական մի առանձնայատկութիւնն է։ Չէ կարելի ասել, թէ մենք աւելի կրօնամոլ, աւելի կղերական էինք քան, օրինակ, բիւզանդական շրջանի յոյները. եւ սակայն բիւզանդացիները ժամանակ էին գտնում նաեւ աշխարհիկ գրականութեան ծառայելու, իսկ մենք—ոչ։ Դեռ չորրորդ դարից սկսած յոյների մէջ գոյութիւն ունէր սիրային-էրոտիական վէպը, որ պահվեց մինչեւ Բիւզանդիայի անկումը։ Շատերն էին այդպիսի վէպեր գրում. եւ եթէ բիւզանդական վէպը գրական շատ արժանաւորութիւններ չունէր, մարդկային ստեղծագործութիւնների շարքում մեծ անուն չը թողեց, բայց գոնէ կար այն, որ թարմութիւն ունէր, պատկերներ էր հանում ժողովրդական կեանքից, շօշափում էր ժամանակի բարքերն ու սովորութիւնները, ոմի ճաշակ էր տալիս, ընթերցանութեան նիւթ էր տալիս։ Վէպը Բիւզանդիայից անցաւ Եւրոպա, մեր ժամանակակից վէպերի նախահայրը դարձաւ, իսկ դէպի արեւելք, դէպի Հայաստան, անցնելու ճանապարհ չը գտաւ։ Բայց հայերը որպիսի ջերմեռանդութեամբ էին աշակերտում յոյներին կրօնական-սխոլաստիական գրականութեան մէջ...

(Կը շարունակվի)

հեղինակութիւններ գրած լինէր։ Բայց Խաչատուրը առաջին մարդն էր, որ միջնորդ հանդիսացաւ արեւմտեան գիտութեան եւ հայերի մէջ, գրելով «Բովանդակութիւն ամենայն ուսմանց» անունով աշխատութիւնը (երկու հատոր), որի մէջ խօսում էր գիտութիւնների մասին (մարդակազմութիւն, տիեզերագիտութիւն, բուսաբանութիւն, կենդանաբանութիւն, բժշկութիւն, մաթեմատիկա, երաժշտութիւն, մետաֆիզիկա) ի հարկէ այն չափով եւ ուղղութեամբ, որ ներելի էր մի ատուածաբան վարդապետի։ Բայց այս նշանաւոր աշխատութիւնը, ինչպէս եւ Խաչատուրի միւս գործերի մեծ մասը, ազգի սեփականութիւն դարձան XVIII դարում, երբ նա տեղափոխվեց Վենետիկ՝ տպագրութիւններով զբաղվելու համար։ Առ այժմ ասենք, որ Խաչատուր վարդապետը 1697 թուին բարեկամացաւ Մխիթար Սեբաստացու հետ եւ անկասկած մեծ ազդեցութիւն գործեց այդ ոգեւորված, խրախոյս եւ աջակցութիւն որոնող երիտասարդ վարդապետի վրա, իբրեւ հմուտ եւ գիտուն հեղինակ, թէեւ աշխատում էր յետ կանգնեցնել Մխիթարին վանական միաբանութիւն կազմելու մտքից։

1696 թուին Լիվորնոյի տպարանը հրատարակեց «Եօթն իմաստասիրաց» յայտնի վէպը հետեւեալ վերնագրով. «Գիրք պատմութեան Կայսերն Փոնցիանոսի եւ կնոջն եւ որդւոյն Դիոկղետիանոսի, եւ յեօթանց իմաստասիրաց»։ Մի շատ տարածված, միջազգային վէպ է դա, որի հայրենիքը Հնդկաստանն է։ Հնդկաստանը, ինչպէս յայտնի է, ստեղծագործել է այնպիսի գեղարուեստական գործեր, որոնք մեծ ժողովրդականութիւն են գտել բոլոր ազգերի մէջ. այսպէս է Յովսափի եւ Բարլաամի հռչակաւոր վէպը, այսպէս են նաեւ կախարդող երեւակայութեան ստեղծած այն հէքեաթները, որոնք մտել են արաբական «Հազար ու մի գիշեր»-ի մէջ։ Բայց հնդկական մտքի այդ գործերը հարազատութեամբ, անփոփոխ չեն տարածվել ազգերի մէջ, այլ խմբագրվել են զանազան կերպով, ստացել են ուրիշ կերպարանք, պահպանելով միմիայն կորիզը։ Այս տեսակ վիճակի է ենթարկվել եւ «Եօթն իմաստասիրաց» պատմութիւնը. նա թարգմանվել է յունարէն եւ հրէական լեզուներով, վերջին լեզուից փոխադրվել է լատիներէնի եւ տարածվել է եւրոպական ազգերի մէջ, ստանալով այդտեղ զանազան խմբագրական ձեւեր։ Այդ ձեւերից մէկի թարգմանութիւնն է հայերէնը, բայց թէ երբ է կատարվել այդ թարգմանութիւնը—որոշ յայտնի չէ. գոնէ կայ մի ձեռագիր, որ գրված է 1616 թուին *)։ Բանասիրական մի ուսանելի հարց է՝ թէ արդեօք հայերը չունէին այդ վէպի թարգմանութիւնը նախ քան արեւմտեան խմբագրութեան ծանօթանալը, այսինքն մի թարգմանութիւն, որ աւելի հին լինէր, արեւելեան թարգմանութիւններից վերցրած։ Բայց թողնենք բանասիրական հարցերը, տեսնենք թէ այդ գիրքը ինչ տեղ ունի հայոց գրականութեան մէջ։

Նայելով «Եօթն իմաստասիրաց» պատմութեան իբրեւ մի գրական գործի, որ մեծ ժողովրդականութիւն է վայելել ամեն տեղ, ուր թարգմանվել է, մենք նախ եւ առաջ կանգ ենք առնում մի հանգամանքի դիմաց.—գրական արժանաւորութիւնները չեն, որ սիրել են տալիս մի գիրք ժողովրդին, այլ առհասարակ պարզ ու անպաճոյճ պատմուածքը, հետաքրքրաշարժ բովանդակութիւնը, որ համապատասխանում է ամբոխի հասկացողութիւններին։ Մեր օրից մի 20—30 տարի առաջ, երբ արդէն գոյութիւն ունէր աշխարհիկ գրականութիւն, «Եօթն իմաստասիրաց» գիրքը դեռ կարդացվում էր ամենամեծ հետաքրքրութեամբ եւ համարվում էր խելքի ու գիտութեան մի բարձր գործ։ Այդ ժողովրդականութիւնը, անկասկած, անհամեմատ մեծ ու ընդարձակ էր անցեալ դարերում, երբ գրքերը միայն աղօթքներ եւ կրօնական բացատրութիւններ էին պարունակում իրանց մէջ։ Եօթն իմաստասէրների պատմութիւնը մեզանում չորս կամ աւելի տպագրութիւն ունեցաւ, եւ սա, ի հարկէ, մի ապացոյց է, որ նա մեր հայրերի առանձին ուշադրութեան, առանձին սէրին արժանացած մի մտաւոր սնունդ էր։

Սակայն ինչ տեսակ սնունդ է դա։ Ամենաթեթեւ, ամենաներողամիտ քննադատութիւնն անգամ անկարող է հաշտվել այդ պատմուածքի չափազանց արուեստական, միամիտ ձեւի հետ։ Իսկապէս դա առակների մի ժողովածու է, առակներ, որոնց մէջ մի չինծու, խեղճ կապ հաստատելու համար յերիւրված է Փոնցիանոսի, նրա կնոջ ու որդու պատմութիւնը։

Դէպքը պատահում է, որպէս թէ, Հռոմում։ Փոնցիանոս կայսրի կինը Դիոկղետիանոս անունով մի որդի է ծնում ու մեռնում. կայսրը որդուն յանձնում է եօթն իմաստասէրներին կրթելու համար, իսկ ինքը ամուսնանում է երկրորդ անգամ։ Երկրորդ ամուսինը, իբրեւ խորթ մայր, ուզում է ոչնչացնել Դիոկղետիանոսին եւ ստիպում է իր ամուսնուն բերել տալ նրան եօթն իմաստասէրների մօտից։ Այդ իմաստասէրները աստղագէտներ են. Դիոկղետիանոսն էլ ուսումնասիրել է այդ արհեստը եւ նայելով աստղին, հասկանում է, որ ինքը, մեծ վտանգից ազատվելու համար, պիտի եօթն օր անխօս մնայ։ Տանը խորթ մայրը առանձնանում է նրա հետ եւ առաջարկում է նրան իր մարմինը. Դիոկղետիանոսը մերժում է եւ մի եւ նոյն ժամանակ թագուհուն շրջապատող աղջիկներից մէկի մէջ ճանաչում է ծպտեալ սիրականին, որ ապրում էր իր մօր հետ։ Այդ մայրը հասկացնում է իր ամուսնուն, թէ որդին կամենում էր իրան բռնաբարել. կայսրը հրամայում է սպանել որդուն։ Եւ սկսվում է մի մրցութիւն թագուհու ու եօթն իմաստասէրների մէջ։ Թագուհին առակով համոզում է Փոնցիանոսին սպանել տալ որդուն, իսկ եօթն իմաստասէրները հերթով մի մի առակ են ասում եւ ազատում իրանց աշակերտին։ Եօթն օր տեւում է այդ մրցութիւնը. կայսրը կամ իր կնոջն է լսում կամ իմաստասէրներին. եօթն օրից յետոյ խօսում է Դիոկղետիանոսը, մի մեծ առակ է պատմում եւ խայտառակում է խորթ մօրը, մերկացնել տալով նրա ծպտեալ սիրականին։

*) Հ. Տաշեան—«Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», 1896, եր. 437։

էին Թիֆլիսի մի թերթում. այդ յօդուածները ուղղված էին Մխիթար վարդապետի դէմ. գրչակները պնդում էին, թէ դպրոցում աշակերտները պաս չեն պահում չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը... Մխիթար վարդապետի տեղը եկաւ Մուշէ վարդապետը։ Զը գիտեմ՝ այժմ դպրոցում չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը մի՞ն ուտում թէ լոբի, բայց գիտեմ միայն, որ դպրոցի կարգերը, շնորհիւ հայր Մուշէի, ողորմելի դարձան։ Պ. Զաթալբաշեան հայր Մուշէի սիրելին եւ alter ego-ն է եւ պ. Զաթալբաշեան նորից սկսում է ծեծել աշակերտներին։ Օրինակը վարակիչ է. անցեալները մնացեան էլ ծեծում է մի աշակերտի. դա էլ երեւի համարում է ծեծը մի նոր մնացական միջոց դպրոցի վիճակը բարելաւելու։

Խեղճ աշակերտ. առաւօտը ծեծում է ուսուցիչը, երեկոյեան մնացեալը։ Ապա հայր Մուշէն ինչ է անում։ Աւաղ, մնացեան էլ հայր Մուշէի սիրելին է. հայր Մուշէն սիրում է զօրեղ մարդկանց։ Հէնց Նոր-Նախիջեւան եկած օրից հայր Մուշէն սկսեց զբաղվել քաղաքականութեամբ։ Հէնց գալու առաջին օրից նեղ կուսակցական ոգին երեւաց. ոչ գործ, այլ անձը, ոչ գաղափար, այլ կուսակցութիւնը, ահա ինչ էր գրված հայր Մուշէի դրօշակի վրա։

Բարեխիղճ մարդիկ զարմացած հեռացան նրանից. փոյթ չէ. հայր Մուշէն շարունակում էր իր քաղաքականութիւնը եւ շարունակում է այժմ։

Մենք խորհուրդ կը տայինք նրան հեռանալ Նոր-Նախիջեւանից եւ մի ուրիշ տեղ պաշտել եւ սրբել չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, իսկ եթէ նա վճռել է մնալ այստեղ, մենք նրան խորհուրդ կը տայինք յիշել Գամառ-Քաթիպայի յայտնի, բայց անտիպ ոտանաւորը՝

«Քեզ պերինք տըղաք կրթելու համար,
Զէքի սաղ ու սոլ պամնելու չամառ.
Ծեծով բան սորվել հընար որ ըլար,
Էշէկը չօխտան փռաֆէսըռ կըլար։
Ծեծելու ատպէս որ հավէս ունիս,
Տեղըդ օթառն է, դպրոց ինչ ունիս։
Տըղուն անուշ խօսք կը վայլի մեծէն.
Շինտրիս հայվանն ալ ադատ է ծեծէն»։

Գր. Զալիուշեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, հոկտեմբերի 24-ին

«Մշակի» 196 եւ 197 համարների մէջ զետեղված են յօդուածներ քահանայական ընտրութիւնների մասին։ Այդ յօդուածներում պատկերացրած քահանայական ժողովը, որ տեղի ունեցաւ ներկայ հոկտեմբերի 16-ին, յեղաշրջված է։ 1) Յօդուածի մէջ յիշված է, թէ գործակալները, որպէս թէ թեմական առաջնորդի թելադրութեամբ, նախապէս պատրաստել էին ժողովին հրաւիրվող քահանաներին՝ ստորագրել տալու ժամանակ, որ այս եւ այն անձին ընտրեն. հիմնովին սխալ եւ զրպարտութիւն է այս, որովհետեւ նոյն իսկ չորս միւս պատգամաւորները՝ վարդապետները եւ քահանաներն անգամ առանձին-առանձին ներկայանալով առաջնորդին՝ ցանկացել են որ եւ է կերպով իմանալ նրա տրամադրութիւնը եւ կարծիքը ընտրելի երկու հոգաբարձու քահանաների մասին, բայց այս չէ ազդվել նրանց, որովհետեւ ազատ ընտրական իրաւունքի սկզբունքի ջերմ պաշտպան է եղել միշտ առաջնորդը եւ է, հապա ուր մնաց, որ մեզ թելադրէր իր ջերմ պաշտպանած յիշեալ սկզբունքին դաւաճանել եւ հակառակ գործել, եւ 2) ժողովի նկարագրութիւնը, որտեղ ջատագովված է Ճուղուրեանց քահանայի բռնած դիրքը եւ մոռացված է առաջնորդի ներողամիտ եւ դէպի իր ստորադրեալները ընկերաբար վերաբերմունքը, հեռու են իրականութիւնից։ Սրբազան նախագահը ամենականօնաւոր կերպով բացեց ժողովը՝ նախապէս շեշտելով՝ համառօտ բացատրելով դպրանոցի դիրքն ու վեհութիւնը եւ ընտրելի քահանաների պարտքը դպրոցական ասպարիզում՝ միանգամայն ազատ իրաւունք տալով ձայնատու ժողովականներին՝ ընտրել որոնց իրանք կամենում են եւ ոչ թէ բռնութիւն կամ ճնշումն անելով, ինչպէս որ յօդուածագիրը պնդում է միմիայն հասարակութեան միտքը մոլորեցնելու դիտաւորութեամբ։

Ժողովի եւ միանգամայն նախագահի հոգու խաղաղութիւնն ու անդորրութիւնը խանգարողը, նրանց սուր կերպարանք տուողն ու լարողը Ճուղուրեանցի նախագահին, որ իր մերձաւոր իշխանաւոր պետն է, անխոհեմաբար առաջարկած ամէն մի հարցն էր, որ զուրկ էր տարրական քաղաքավարութիւնից, համեստութիւնից եւ պարտաճանաչութիւնից, որովհետեւ եթէ մենք մեր հաւատարներին եւ կամ մինչեւ անգամ մեր ստորադրեալ ծառաներին կամենում ենք մի հարց առաջարկել կամ մի բան ասել—պատուիրել, քաղաքավարութեան եւ մարդավարութեան կանոնի ըստ կերպաբար վերաբերմունքը, հեռու են իրականութիւնից։ Սրբազան նախագահը ամենականօնաւոր կերպով բացեց ժողովը՝ նախապէս շեշտելով՝ համ

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правительственный Вѣстникъ» հաղորդում է, թէ հոկտեմբերի 17-ին «մեծ-բռունցքների» մի խումբ երեւաց Կվանտունեան շրջանի սահմանի վրա, Սանչժան-Միաոից 8 վերստ հեռու։ Պահակակէտի գլխաւոր՝ չտաբա-կապիտան Կովալսկի իր զօրաբաժնով յարձակումն գործեց բռունցքամարտիկներից գրաւված գիւղի վրա եւ դուրս քշեց նրանց այնտեղից։ Հակառակորդից խլված են հրացաններ եւ գնդակներ։

Հոկտեմբերի 16-ին նախաձիգ գնդի կիսավաշտը Շանգհայ-Գուանի մօտ ազատեց ֆրանսիական միսիոնարներին, որոնց գլուխ էր կանգնած մի եպիսկոպոս եւ որոնք շրջապատված էին «Մեծ-բռունցքից»։ Մենք կորուստ չունեցանք։

ՊԵԿԻՆ։ Լի-Խունգ-Զանգ մանաւոր կերպով դիմեց դեսպաններից մի քանիսին եւ աշխատեց համոզել նրանց, որ նրանք գործ դնեն իրանց ազդեցութիւնը Վալդերզէյի վրա եւ համաձայնեցնեն նրան յետաձգելու մահվան պատիժը, որին դատապարտված են մանդարինները Պաօտինֆուում։ Զինական արքունիքը չէ կարող վերադառնալ Պեկին գարնանից առաջ։—Երկիւղ կայ, որ Սինանֆուի մօտ բռնկի մահմեդականների ապստամբութիւն, որ ազդեցութիւն կունենայ գահի ապահովութեան վրա։

Լի-Խունգ-Զանգ եւ 8ին յանձնեցին դեսպաններին հողատէրերի բողոքագիրը, որոնք կալուածքներ ունեն Պաօտինֆուի եւ Պեկինի միջ տեղում, այն կողոպտումների դէմ, որոնք կատարվում էին այնտեղ։ Բողոքողները յայտնում են, թէ գործողութեան այդ եղանակը այն դէպքում, երբ զօրքերին չէ ցոյց տրվում ոչ մի դիմադրութիւն, զինուորական իրաւունքի հակառակ է։

ՄԱՍՍԵՐՈՒ։ Բաղուտօլանդի սահմանի վրա հաւաքվող բօէրների թիւը քանի գնում, աւելի եւս աւելանում է։ 1,400 մարդուց բաղկացած մի զօրաբաժին գտնվում է Լէդի-Բրանդի մօտ։ Ֆիկսբուրգ քաղաքն եւ նրա շրջանը թշնամու ձեռքին են։ Այն բօէրները, որոնք գրաւել են Ֆիկսբուրգ, գտնվում են Գերմանուսի եւ Շտէյնի հրամանատարութեան տակ։ Քաղաքի նահանգապետը Բոզէնբախն էր։ Ֆիկսբուրգը գրաւելու ժամանակ խանութները բոլորովին կողոպտվեցին. կողոպտումներ եղան եւ մանաւոր տներում. անգլիական դրօշակը վայր բերվեց, պատառպատառ արվեց եւ ապա նրա մասերը կապվեցին ձիերի պոչերին. մի քանի տեղացիներ հրացանի բռնվեցին, միւսները փողոցի մէջ ենթարկվեցին կոտորածի. մի ականաւոր վաճառական ձերբակալվեց եւ ուղարկվեց բօէրների բանակատեղին, ուր նրան կը դատեն պատերազմական օրէնքով. բացի դրանից ձերբակալված է եւ պօստային աստիճանաւորը։ Անգլիացիների թողած ռազմամթերքն ընկաւ բօների ձեռքը։

ՋԻԲՈՒՏԻ։ «Գեղերլանդ» երէկ հասաւ այստեղ, ուր եւ կը մնայ երեք օր։ Պօրտ-Սայիդում կըստացվեն հրահանգներ Կրիւգէրի ափ իջնելու մասին Եւրոպայում։ Կրիւգէրի առողջութիւնը գերազանց է. նա ուրախութիւն յայտնեց, երբ ստացաւ բօէրների վերջին աջողութիւնների լուրը։ Դոկտոր Գէյման յայտնեց, թէ Կրիւգէր Եւրոպա է գալիս միայն իբրեւ արձակուրդի։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովի նիստը բացվեց առանց որ եւ է միջնադէպքի։

ՀՕՆԳԿՕՆԳ։ Կանտոնից ստացված տեղեկութիւններով՝ չինացիները վրդովված են, որ Կանտոնում գտնվում են բազմաթիւ օտարերկրեայ զինուորական նաւակներ։ Տասն եւ մէկ զինուորական նաւեր խարիսխ են ձգել Շամինի հանդէպ։

25 հոկտեմբերի

ԿԻՄԲԵՐԼԷԻ։ Կեֆֆիֆոնտէնից ստացված մանաւոր տեղեկութիւններին նայելով՝ այդ աւանը, որ գրաւված էր բօէրներից, յետ առնվեց հոկտեմբերի 21-ին։

ԼՕՆԴՕՆ։ Կեմպբէլ հեռագրում է, որ նա հասել է Վանցիակօու, որ գտնվում է մի ճահճային տեղի հարաւակողմում, Պաօտինֆուն եւ Տեանձինը միացնող գետի վրա։ Այն ինչ բարեյաջող դրութեան մէջ է։ Նա գրաւել է այնտեղ եամիները եւ այնպիսի փաստաթղթեր, որոնք հաստատուցիչ կերպով ապացուցանում են, թէ բնակիչները «Մեծ-բռունցքին» աջակցութիւն էին ցոյց տալիս։ Կեմպբէլ անհրաժեշտ համարեց չինացիների վրա, որքան կարելի է, աւելի զօրեղ տպաւորութիւն գործել եւ կործանեց հիւսիս-արեւելեան եւ հիւսիս-արեւմտեան մարտկոցները, նոյնպէս եւ «մեծ-բռունցքների» Լիուխօչման գիւղը, որ զետեղված է Վանցիակօուի հիւսիսակողմում։ Այնտեղ նա գտաւ մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմամթերք։ «Մեծ-բռունցքները» հեռացան իրանց դիրքերից զօրքերի գալուց առաջ, թաղեցին զէնքի մէջ զէնքերն եւ ցրվեցին շրջակայ տեղերը։ Տեղացի քրիստոնեաները ասում են, թէ «մեծ-բռունցքների» այդ տեսակ բների աւերումը լաւ տպաւորութիւն կը գործէ ամբողջ շրջակայքի վրա եւ կօգնէ նրանց կեանքի եւ գոյքի պահպանութեան գործին։

ՆԻՒ-ԻՕՐԿ։ Մակ-Կինլէյ ընտրված է Միացեալ-Նահանգների նախագահ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ծամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րօպէ։

№ 5 գնացքը։ № 3 գնացքը.

Բաղուից դուրս է գալիս	ցեր.	3 ժ. 5 ր.	գիշ.	11 ժ. 15 ր.
Թիֆլիս է հասնում	առ.	8 » 23 »	եր.	5 » 35 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 » 3 »	եր.	6 » 30 »
Բաթում է հասնում	եր.	9 » 11 »	առ.	7 » 10 »

№ 6 գնացքը։ № 4 գնացքը.

Բաթումից դուրս է գալիս	առ.	8 ժ. 56 ր.	եր.	10 ժ. 47 ր.
Թիֆլիս է հասնում	եր.	8 » 42 »	առ.	11 » 18 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 » 22 »	»	12 » 36 »
Բաղու է հասնում	ցեր.	1 » 25 «	»	7 » — »

արագ գնացք

Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

Թիֆլիսից դուրս է գալիս	առաւ.	7 ժ. 56 ր.
Բաղու է հասնում	երեկ.	9 » — »
Բաղուից դուրս է գալիս	առաւ.	6 » 50 »
Թիֆլիս է հասնում	երեկ.	8 » 12 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	10 ժ. —
Ալէքսանդրօպոլ հասնում է . . .	առ.	8 » 27 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 » 23 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	4 » 12 «
Ալէքսանդրօպոլ հասնում է . . .	երեկ.	7 » 40 »
Թիֆլիս հասնում է	առ.	6 » 15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մրսածու. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պրօսուսեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօսուսեվիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մրսածու հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիսյան—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

որանով յայտնում է, որ նրա դիւանատան մէջ 1900 թուի հոկտեմբերի 28-ին, ցերեկվայ ժամի 12-ին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Անաստասիեվսկայա (Նովո-Կորգանովսկայա) փողոցը ամբողջապէս քարայատակելու գործը. 229 պաղ. սաժէն երկարութեամբ եւ 1432 ր. 40 կ. գումարի։ Անաստասիեվսկայա փողոցը գտնվում է Թիֆլիսի I քաղաքամասում։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան չինարարական բաժանմունքում բոլոր լի օրերը՝ ժամի 9-ից մինչեւ 3-ը։ 3—3

Լոյս տեսաւ
ԿԱՄԻԼԼ ՖԼԱՄՄԱՐԻՕՆԻ

ՈՒՐԱՆԻԱ

ասողագիտական վէպը

Թարգմ. ֆրանս. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ։

Գիրքը տպված է լաւ եւ չքեղ թղթի վրա, 376 երես, միջակ դիրքով եւ արժէ 1 ր. 50 կ.
Դիմել՝ Тифлисъ, Г. Галустянцу, Лорис-Меликовская, № 11. 10—10

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԳԲԱԿԵԱՆ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԳԻՆՆ Է 1 Ր.

Թիֆլիսում դիմել—Կենտրոնական եւ Զաք. Գրիգորեանցի գրավաճառանոցներին, նոյնպէս եւ Աղէքսանդր Ստեփանեանցին (Զուբալովի քարվանսարայում)։ (Ե. Հ. Չ.) 10—10

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՊԻՆԵԱՆԻ

1901 թ.

ԾՈՑԻ եւ ՊԱՏԻ

(Շիրակ)

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարված է Ներսէս V Կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Րաֆֆիի եւ Յ. Այվազովսկու պատկերներով, ունի բոլորովին նոր եւ հետաքրքիր յաւելուած՝ ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երաշխան ու նոր զուարճալի վիճակարան։

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր մտքեր, հայոց եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բոլորովին նոր ծիծաղաշարժ առակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, շուտասելուկներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ։ Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է յայտնի լիտոգրաֆիայում, 15 գոյնով։ Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը տրպագրված առանձին թերթով կարող են ստանալ ձրի։

Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ. գումարով գնողներին լինում է զիջում։

Դիմել՝ Александрополь. Карапету Апинянъ, կամ Alexaandrople Karapet Apinian (Caucase)։ Ցանկացողները թող շտապեն, որ իր ժամանակին կարողանանք պատուէրները ճշդութեամբ կատարել։ (Ե) 5—12

Լոյս տեսաւ Մոսկվայում
ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

◆ՀԻՆ ՅԱՒ◆

(Հրապարակախօսական խոհեր)

ԳԻՆԸ 30 Կ.

Վաճառվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում, «Մշակի» խմբագրատանը եւ Հրատարակչական ընկերութեան գրասենեակում։ 10—10

Բ Ժ Ի Շ Կ

ՏԻԳՐԱՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Ընդունում է առաւօտեան 11—12 ժ. եւ երեկոյեան 5—6 ժ.

Մասնագիտութիւն՝ ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։

Шелковниковская (Большая Кривая), д. Шаумова, № 18. 15—20

Հարկաւոր է մի ուսուցիչ Էնզէլիի հայոց երկսեռ դպրոցի համար։ Պայմանների մասին տեղեկանալ «Մշակի» խմբագրատանը։ 5—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատով։ 1—100

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱԻԱԳԸ ԵՒ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ

պատիւ ունեն խնդրելու Թիֆլիսի I եւ II գիլդիաների վաճառականներին չնորհ բերել ընդհանուր ժողովի, որ տեղի է ունենալու կիրակի, հոկտեմբերի 29-ին, առաւօտեան ժամի 10-ին, քաղաքային դուման դահլիճում։

Պարապմունքի նիւթերն են.

Երեք անդամների եւ նրանց երկու փոխանորդների ընտրութիւն նոր կազմակերպված Թիֆլիսի քաղաքային հարկաբաժան երրորդ դիւանատան համար։ Ընտրութիւնը պէտք է լինի այն առեւտրականներից, որոնք ապրում են Թիֆլիսի I եւ X քաղամասերում։

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 25 հոկտեմբերի (7 նոյեմբերի)—շոգենաւ՝ ՍԻՐԿԱՍԻ, կապիտան ԳԱՐՐԻԳ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են ռովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Չ.) 10—20

Дозволено цензурою, Тифлисъ. 25 Октября 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27.